Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի

Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 47764/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան

16/09/2021

1. **Արշավիր Մակիչյան** ՀՎՀՀ **43194847**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Կոտայքի մարզ, Մայակովսկի 5շ., 37բն.**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **AR0320765**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 20.06.2019թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք են ներմուծվել ներքոհիշյալ ապրանքները"

Հ/Հ	Ապրանքի ծածկագիր	Ապրանքի կոմերցիոն նկարագրություն	քանակ	Չ/Մ	Ինվոյսային արժեք (RUB)	Փոխարժեք	Ինվոյսային արժեք (ՀՀ դրամ)
1	8528722001	АППАРАТУРА ПРИЕМНАЯ ДЛЯ ТЕЛЕВИЗИОННОЙ СВЯЗИ	1	հատ	4,300	7.47	32,121
2	4418208000	ДВЕРИ И ИХ РАМЫ И ПОРОГИ, ИЗ ДРЕВЕСИНЫ ПРОЧИХ ПОРОД	90	կգ	7,500	7.47	56,025
		Ընդամենը			11,800		88,146

Վերը նշված ապրանքները գերազանցել են ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 865-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները (ԱՏԳ ԱԱ 8528 (ենթադիրք՝ 8528722001), 44 (ենթադիրք՝ 4418208000), ծածկագրերի համար համապատասխանաբար՝ 2հատ, 50կգ), ուստի Դուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի թիվ 865-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման համար հիմք են հանդիսացել Օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից

ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձ Արշավիր Մակիչյանի կողմից իրականացված վերը նշված հարկվող գործարք համարվող՝ ապրանքատեսակների մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը՝ 24,900 ՀՀ դրամ [[7,500 / 90 x 40] x 7.47/փոխարժեք/]

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով՝ 4,980 ՀՀ դրամ [24,900 x 20%]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 1,932 ՀՀ դրամ (16/09/2021թ. դրությամբ) [4,980 x 274օր x 0.075%] + [4,980 x 456օր x 0.04%]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը (16/09/2021թ. դրությամբ) կազմում է՝ 6,912 ՀՀ դրամ [4,980 + 1,932]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 16/09/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

Մաքսային մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

7.Ընդամենը՝

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հարկային տեսուչի ժ/պ Լիլիթ Հարությունյան